# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | Դիասեպտիկ 70, 750 մլ | Ինտերսեն պլյուս | «Դիասեպտիկ-70» մակերեսների արագ ախտահանման քառակոմպոնենտ միջոց է, իրենից ներկայացնում է թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկի տեսքով, սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով կիրառման համար պատրաստ լուծույթ՝ 750 մլ պարունակությամբ ֆլակոններում, որոնք ունեն ցողացրիչ հարմարանք: Պահպանման ժամկետը՝ 5 տարի: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ՝ 70,0%, ունդեցիլ ամիդոպրոպիլ տրիմոնիում մետոսուլֆատ՝ 0,23%, 2-ֆենօքսիէթանոլ՝ 0,30%, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,10%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչը՝ թեստավորված M.terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) հարուցիչները՝ թեստավորված P.aeruginosa-ի վրա), վիրուսների՝ ընդերային և արտաընդերային Ա, Բ, Ց, Դ հեպատիտների, ՄԻԱՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսի, հերպեսի վիրուսների, գրիպի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վիրուսների (այդ թվում «թռչնի», «խոզի»), պարագրիպի, ադենովիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, էնտերովիրուսային վարակների՝ պոլիոմիելիտի, Կոքսակի, ECHO, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսների, ՍՇՎՀ հարուցիչների, Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ: <<Դիասեպտիկ -70>> մակերեսների արագ ախտահանման միջոցն օժտված է ախտահանիչ, ճարպազերծող և դեզոդորացնող հատկություններով, ազդեցությունը՝ սկսած 15 վայրկյանից մինչև 3 ժամ տևողությամբ: Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, տարբեր ուղղվածության հիմնարկներում և հաստատություններում, այդ թվում նաև կենցաղում, որպես միջոց տարբեր օբյեկտների և ոչ մեծ մակերեսներով մակերևույթների արագ ախտահանման համար, այդ թվում՝ կոշտ և փափուկ գույքի, բժշկական, բարուրասեղանների, սեկցիոն սեղանների, կահավորանքի պարագաների, լուսավորող սարքավորումների և սարքերի, մանրէասպան լամպերի, բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսների (այդ թվում կուվեզների, արհեստական շնչառության սարքերի, անեսթեզիոլոգիական սարքերի, օպտիկական սարքերի, մամոգրաֆների, ֆոնենդոսկոպների, ախտորոշիչ սարքավորումների, այդ թվում ուլտրաձայնային հետազոտության (ՈւՁՀ), տվիչների և գլխադիրների, կարդիոէլեկտրոդների), ֆիզիոթերապևտիկ սարքավորման, բարոխցերի, գինեկոլոգիական բազկաթոռների, բազկաթոռների գլխակալների և արմնկակալների, սայլակների, պատգարակների, հենակների, դռների և պատուհանների բռնակների, բազրիքների, անջատիչների, շերտավարագույրների, դեկորատիվ պանելների (էկրան), ջեռուցման համակարգի խողովակաշարերի արագ ախտահանման համար, բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում ատամնաբուժական գլխադիրներ և ատամնաբուժական նյութեր (ատամնապրոթեզային կիսահումքեր, ալգինատային, սիլիկոնային, պոլիեթերային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտատպվածքներ), ախտահանման, մաքրման և դեզոդորացման համար: Տրանսպորտային միջոցների, այդ թվում շտապ և անետածգելի բուժօգնության, սանիտարական տրանսպորտի, հանրային և բեռնատար տրանսպորտի արագ ախտահանման համար՝ սկսած 15 վայրկյանից: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը՝ 4-րդ դաս: Ունի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) և ՀՀ ԱՆ 28 օգոստոս 2020թ. հաստատված մեթոդական հրահանգ՝ թիվ 2936-L: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 6 | | | |